ԿՈՆՎԵՆՑԻԱ

Քաղաքացիական դատավարության մասին

Սույն Կոնվենցիան ստորագրողները,

ցանկանալով, փորձից ելնելով, կատարելագործել 1905 թվականի հուլիսի 17-ի Քաղաքացիական դատավարության մասին կոնվենցիան,

որոշում են այդ նպատակով կնքել նոր կոնվենցիա և համաձայնության են գալիս հետևյալ դրույթների շուրջ.

1. Դատական հրամանների և արտադատական փաստաթղթերի հանձնումը

Հոդված 1

Պայմանավորվող պետությունների տարածքում քաղաքացիական կամ առևտրային գործերով փաստաթղթերն արտասահմանում գտնվող անձանց հանձնվում են հայցող պետության հյուպատոսի կողմից՝ հայցվող պետության նշանակած մարմիններին ներկայացվող խնդրանքով: Խնդրանքը, որում նշվում են փոխանցվող փաստաթուղթն ընդունած մարմնի անվանումը, կողմերի անուններն ու կարգավիճակը, հասցեատիրոջ հասցեն ու փաստաթղթի բնույթը, կազմվում է հայցվող մարմնի լեզվով: Հայցվող մարմինը հյուպատոսին է փոխանցում հավաստագիր առ այն, որ փաստաթուղթը հանձնվել է, կամ նշում է փաստաթուղթը չհանձնելու պատճառները:

Հյուպատոսի խնդրանքի հետ կապված ցանկացած դժվարություն լուծվում է դիվանագիտական ուղիներով:

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն մյուս Պայմանավորվող պետությունների հետ հաղորդակցվելիս կարող է հայտարարել ցանկությունն առ այն, որ իր տարածքում փաստաթղթեր հանձնելու վերաբերյալ 1-ին պարբերությունում նշված տվյալներ պարունակող խնդրանքը ներկայացվի դիվանագիտական ուղիներով:

Նախորդ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել երկու Պայմանավորվող պետություններին՝ համաձայնության գալու իրենց համապատասխան մարմինների միջև անմիջական հաղորդակցություն թույլատրելու հարցում:

Հոդված 2

Փաստաթղթերի հանձնումը կատարվում է հայցվող պետության օրենսդրության համաձայն՝ իրավասու մարմնի միջոցով: Բացառությամբ 3-րդ հոդվածում նշված դեպքերի, այդ մարմինը կարող է փաստաթղթերի հանձնումն իրականացնելիս սահմանափակվել դրանք հասցեատիրոջը փոխանցելով, եթե վերջինս կամավոր է ընդունում դրանք:

Հոդված 3

Փաստաթղթերի հանձնման մասին խնդրանքին կցվում են հանձնման ենթակա փաստաթղթերի երկու պատճեն:

Եթե հանձնման ենթակա փաստաթուղթը կազմված է հայցվող մարմնի լեզվով կամ Պայմանավորվող երկու պետությունների միջև համաձայնեցված լեզվով, կամ դրան կցված է թարգմանություն՝ այդ լեզուներից որևէ մեկով, հայցվող մարմինը, եթե խնդրանքում նման ցանկություն է արտահայտված, փաստաթղթի հանձնումը կատարում է նման դեպքերի համար իր ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով կամ հատուկ կարգով, եթե դա չի հակասում իր օրենսդրությանը: Եթե խնդրանքում

նման ցանկություն արտահայտված չէ, ապա հայցվող մարմինը նախ և առաջ փորձում է խնդրանքը կատարել 2-րդ հոդվածով սահմանված կարգով:

Այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում նախորդ պարբերությունում նշված թարգմանության իսկությունը հավաստում է հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը կամ հայցվող պետության երդվյալ թարգմանիչը:

Հոդված 4

Փաստաթղթերի՝ 1, 2 և 3-րդ հոդվածներին համապատասխան հանձնումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե պետությունը, որի տարածքում հանձնումը կատարվում է, գտնում է, որ դա կարող է վնաս պատճառել իր ինքնիշխանությանը կամ անվտանգությանը:

Հոդված 5

Փաստաթղթի հանձնման հաստատումը կատարվում է ամսաթվի նշումով՝ հավաստված ստացականի կամ հայցվող մարմնի կողմից տրված հավաստագրի միջոցով, որում արձանագրվում է հանձնման փաստը, և նշվում են հանձնման կարգն ու ամսաթիվը:

Ստացականը կամ հավաստագիրը պետք է գրված լինի պատճեններից մեկի վրա կամ կցված լինի դրան:

Հոդված 6

Նախորդ հոդվածների դրույթները չպետք է խոչընդոտեն՝

1. փաստաթուղթն արտասահմանում գտնվող շահագրգիռ կողմերին՝ ուղղակիորեն փոստով ուղարկելու իրավունքին,

2. շահագրգիռ կողմերին՝ փաստաթղթերն այն երկրի դատական պաշտոնյայի կամ իրավասու այլ պաշտոնյայի միջոցով ուղղակիորեն ստանալու իրավունքին, որտեղ կատարվում է փաստաթղթի հանձնումը,

3. յուրաքանչյուր պետության՝ արտասահմանում գտնվող անձանց՝ փաստաթղթերն իրենց երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների միջոցով ուղղակիորեն հանձնելու իրավունքին:

Փաստաթղթերի հանձնման վերոհիշյալ ցանկացած եղանակ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այն ճանաչվում է շահագրգիռ պետությունների միջև կոնվենցիաներով կամ, եթե նման կոնվենցիաների բացակայության դեպքում պետությունը, որի տարածքում հանձնումը կատարվում է, այդ հարցում առարկություն չունի: Տվյալ պետությունը չի կարող առարկել, եթե 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում փաստաթուղթը պետք է հանձնվի հայցող պետության քաղաքացուն՝ առանց հարկադրանքի կիրառման:

Հոդված 7

Փաստաթղթերի հանձնումը չի կարող հիմք հանդիսանալ այս կամ այն հարկի կամ տուրքի գանձման համար:

Այնուամենայնիվ, համաձայնության բացակայության դեպքում հայցվող պետությունն իրավունք ունի հայցող պետությունից պահանջելու այն ծախսերի փոխհատուցումը, որոնք առաջացել են դատական պաշտոնյայի միջամտության կամ 3-րդ հոդվածում նախատեսված հատուկ կարգի կիրառման հետևանքով:

2. Դատական հանձնարարությունները

Հոդված 8

Պայմանավորվող մի պետության դատական մարմինը կարող է իր օրենսդրության դրույթներին համապատասխան քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական հանձնարարություններով դիմել Պայմանավորվող մյուս պետության իրավասու մարմնին՝ խնդրելով վերջինիս իր իրավազորության շրջանակներում կատարել քննություն կամ այլ դատավարական գործողություն:

Հոդված 9

Հայցող պետության հյուպատոսը դատական հանձնարարությունները փոխանցում է հայցվող պետության նշանակած իրավասու մարմնին: Վերջինս հյուպատոսին է հանձնում փաստաթուղթ, որը վկայում է դատական հանձնարարության կատարումը, կամ նշում դրան խոչընդոտող պատճառները:

Նման փոխանցման հետ կապված ցանկացած դժվարություն կարգավորվում է դիվանագիտական ուղիներով:

Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն, Պայմանավորվող մյուս պետությունների հետ հաղորդակցվելիս, կարող է ցանկություն հայտնել, որ իր տարածքում իրականացվելիք դատական հանձնարարությունը փոխանցվի դիվանագիտական ուղիներով:

Վերոհիշյալ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել Պայմանավորվող երկու պետություններին՝ համաձայնության գալու իրենց համապատասխան մարմինների միջև անմիջական փոխանցում թույլատրելու հարցում:

Հոդված 10

Այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում դատական հանձնարարությունը պետք է կազմվի հայցվող մարմնի լեզվով կամ Պայմանավորվող երկու պետությունների միջև համաձայնեցված լեզվով, կամ դրան պետք է կցվի թարգմանություն՝ այդ լեզուներից որևէ մեկով, որի իսկությունը պետք է հավաստի հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը կամ հայցվող պետության երդվյալ թարգմանիչը:

Հոդված 11

Դատական մարմինը, որին ուղղված է դատական հանձնարարությունը, պետք է կատարի այն՝ կիրառելով հարկադրանքի նույն միջոցները, որոնք կիրառվում են հայցվող պետության մարմնի հանձնարարությունը կամ շահագրգիռ կողմի՝ այդ նպատակով ներկայացված խնդրանքը կատարելիս: Հարկադրանքի միջոցների կիրառումը պարտադիր չէ, եթե խոսքը վերաբերում է կողմերի՝ դատարան ներկայանալուն:

Հայցվող մարմինը, եթե ցանկանում է, տեղեկացվում է հանձնարարության կատարման վայրի ու ժամանակի մասին, որպեսզի շահագրգիռ կողմը հնարավորություն ունենա ներկա գտնվելու:

Դատական հանձնարարության կատարումը կարող է մերժվել, միայն, եթե՝

1. հաստատված չէ փաստաթղթի իսկությունը,

2. հայցվող պետությունում դատական հանձնարարության կատարումը չի մտնում դատական իշխանության գործառույթների մեջ,

3. պետությունը, որի տարածքում պետք է կատարվի դատական հանձնարարությունը, գտնում է, որ դրա կատարումը վնաս կպատճառի իր ինքնիշխանությանը կամ անվտանգությանը:

Հոդված 12

Եթե հայցվող մարմինն իրավասու չէ կատարելու դատական հանձնարարությունը, ապա, նրա օրենսդրությամբ նախատեսված նորմերի համաձայն, այն ինքնաբերաբար փոխանցվում է նույն պետության համապատասխան իրավասու դատական մարմնին:

Հոդված 13

Բոլոր այն դեպքերում, երբ դատական հանձնարարությունը չի կատարվում հայցվող մարմնի կողմից, վերջինս այդ մասին անհապաղ տեղեկացնում է հայցող մարմնին՝ նշելով, ինչ վերաբերում է 11-րդ հոդվածին, դատական հանձնարարության կատարումը մերժելու պատճառները, և ինչ վերաբերում է 12-րդ հոդվածին՝ այն մարմինը, որին հանձնարարությունը փոխանցվել է:

Հոդված 14

Դատական հանձնարարությունը կատարող դատական մարմինը կիրառում է իր երկրի օրենքները՝ կապված ընթացակարգերի պահպանման հետ:

Սակայն, երբ հայցող մարմինը դիմում է հատուկ ընթացակարգ կիրառելու խնդրանքով, ապա այդ խնդրանքը բավարարվում է, եթե նման ընթացակարգը չի հակասում հայցվող պետության օրենսդրությանը:

Հոդված 15

Վերոհիշյալ հոդվածների դրույթները չեն բացառում յուրաքանչյուր պետության՝ դատական հանձնարարություններն իր դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների միջոցով ուղղակիորեն կատարելու իրավունքը, եթե դա թույլ են տալիս շահագրգիռ պետությունների միջև կնքված կոնվենցիաները, կամ, եթե պետությունը, որի տարածքում դատական հանձնարարությունը պետք է կատարվի, առարկություն չունի:

Հոդված 16

Դատական հանձնարարությունների կատարումը չի կարող հիմք հանդիսանալ այս կամ այն հարկի կամ տուրքի գանձման համար:

Այնուամենայնիվ, համաձայնության բացակայության դեպքում, հայցվող պետությունը պետք է իրավունք ունենա հայցող պետությունից պահանջելու վկաներին կամ փորձագետներին վճարած գումարի հատուցում, ինչպես նաև վկաների ինքնակամ չներկայանալու դեպքում դատական պաշտոնյայի հարկադրված միջամտության հետ կապված այն ծախսերի հատուցում, որոնք առաջանում են 14-րդ հոդվածի 2-րդ մասի հնարավոր կիրառման հետևանքով:

3. Օտարերկրացի հայցվորների կողմից դատական ծախսերի և տուգանքների վճարման երաշխիք

Հոդված 17

Պայմանավորվող պետություններից մեկի քաղաքացիները, ովքեր բնակվում են այդ պետություններից մեկի տարածքում և Պայմանավորվող մեկ այլ պետության դատարաններում հանդես են գալիս որպես հայցվոր կամ երրորդ կողմ, չեն կարող պարտադրվել գրավ կամ ապահովում վճարելու այն պատճառով միայն, որ նրանք օտա-

ներկրացի են կամ չեն բնակվում կամ ապրում Պայմանավորվող այն պետության տարածքում, որի դատարանում հանդես են գալիս:

Նույն կանոնը կիրառվում է հայցվորից կամ երրորդ կողմից ի ապահովումն դատական ծախսերի գանձվող ցանկացած այլ վճարի առնչությամբ:

Բոլոր այն պայմանագրերը, որոնցով Պայմանավորվող պետությունները կարող էին իրենց քաղաքացիներին, անկախ նրանց բնակության վայրից, ազատել cautio judicatum solvi-ից կամ դատական ծախսերի վճարումից, մնում են ուժի մեջ:

Հոդված 18

Ապահովումից, գրավից կամ վճարումից 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կամ այն պետության օրենսդրության հիման վրա, որտեղ սկսված է դատական քննությունը, ազատված հայցվորի կամ երրորդ կողմի դեմ Պայմանավորվող մի պետության տարածքում կայացված՝ դատական ծախսերի վճարման վերաբերյալ դատական որոշումը յուրաքանչյուր այլ Պայմանավորվող պետությունում իրավասու մարմնի կողմից կատարվում է անվճար՝ դիվանագիտական ուղիներով ներկայացված խնդրանքով:

Նույն դրույթը կիրառվում է նաև դատական ծախսերի հետագա բռնագանձման վերաբերյալ դատական որոշումների նկատմամբ:

Վերոհիշյալ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել Պայմանավորվող երկու պետություններին՝ համաձայնության գալ առ այն, որ դատական որոշումն ի կատար ածելու վերաբերյալ խնդրանքն անմիջականորեն ներկայացնի շահագրգիռ կողմը:

Հոդված 19

Դատական ծախսերի և վճարումների մասին որոշումները ենթակա են կատարման առանց կողմերին լսելու, սակայն պայմանով, որ կողմը, որից բռնագանձում է կատարվում, ունենա տվյալ որոշումը գանգատարկելու իրավունք այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում որոշումը պետք է ի կատար ածվի:

Մարմինը, որն իրավասու է քննության առնելու որոշումն ի կատար ածելու խնդրանքը, պետք է սահմանափակվի հետևյալ հարցերի քննությամբ՝

1. արդյոք վճիռ կայացնող պետության օրենսդրության համաձայն, որոշման պատճենը բավարարում է դրա իսկությանը ներկայացվող պահանջներին,

2. արդյոք նույն օրենսդրության համաձայն, տվյալ որոշումը օրինական ուժի մեջ է մտել,

3. արդյոք որոշման եզրափակիչ մասը շարադրված է հայցվող մարմնի կամ շահագրգիռ երկու պետությունների միջև համաձայնեցված լեզվով, կամ արդյոք դրան կից կա այդ լեզուներից որևէ մեկով թարգմանություն, իսկ այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում՝ արդյոք դրա իսկությունը հավաստված է հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալի կամ հայցվող պետության երդվյալ թարգմանչի կողմից:

2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պայմանները կատարելու համար բավարար է կա՛մ հայցող պետության իրավասու մարմնի ներկայացրած հայտարարությունն առ այն, որ տվյալ որոշումը մտել է օրինական ուժի մեջ, կա՛մ պատշաճ ձևով հավաստված և տվյալ որոշման ուժի մեջ մտնելը վկայող փաստաթղթերի տրամադրում: Վերոհիշյալ մարմինների՝ իրավասու լինելու հանգամանքը, այլ կարգ սահմանող համաձայնության բացակայության դեպքում, հավաստում է հայցվող երկրում արդարադատության մարմինները ղեկավարող բարձրագույն պաշտոնյան: Վերոհիշյալ հայտարարությունը և հավաստագիրը պետք է կազմվեն կամ թարգմանվեն 2-րդ մասի 3-րդ ենթակետով սահմանված կանոնների համաձայն:

Մարմինները, որոնք իրավասու են քննության առնելու դատական որոշումներն ի կատար ածելու վերաբերյալ խնդրանքը, գնահատում են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետում նշված հաստատագրի, թարգմանության և հավաստագրերի համար կա-

տարված ընդհանուր ծախսերի չափը, եթե այդ մասին միաժամանակ խնդրում է կողմը: Նման ծախսերը դիտվում են որպես դատավարական ծախսեր:

4. Անվճար իրավաբանական օգնությունը

Հոդված 20

Պայմանավորվող յուրաքանչյուր պետության քաղաքացի Պայմանավորվող մյուս պետության տարածքում քաղաքացիական և առևտրային գործերով իրավունք ունի ստանալու անվճար իրավաբանական օգնություն նույն պայմաններով, ինչ այդ պետության քաղաքացիները՝ վերջինիս օրենսդրությանը համապատասխան:

Այն պետություններում, որտեղ անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է նաև վարչական գործերով, վերոհիշյալ դրույթը կիրառվում է նաև նման գործերով իրավասու դատարաններում քննվող գործերի առնչությամբ:

Հոդված 21

Յուրաքանչյուր դեպքում օտարերկրացու սովորական բնակության վայրի կամ, դրա բացակայության դեպքում, նրա ներկա բնակության վայրի մարմինների կողմից տրվում կամ ընդունվում է կարիքավորությունը հավաստող վկայական կամ հայտարարություն: Եթե այդ մարմինները Պայմանավորվող պետության մարմիններ չեն և չեն տալիս կամ ընդունում նման վկայական կամ հայտարարություն, բավական է այն երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալի տված կամ ընդունած վկայականը կամ հայտարարությունը, որի քաղաքացին է օտարերկրացին:

Եթե հայցվորը չի բնակվում այն երկրում, որտեղ ներկայացված է խնդրանքը, ապա կարիքավորությունը հավաստող վկայականը կամ հայտարարությունն անվճար հավաստվում է այն երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալի կողմից, որի տարածքում տվյալ փաստաթուղթը պետք է ներկայացվի:

Հոդված 22

Կարիքավորությունը հավաստող վկայական կամ հայտարարություն տվող կամ ընդունող իրավասու մարմինը կարող է դիմում տվողի ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ խնդրել Պայմանավորվող մյուս պետությունների մարմիններից:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու վերաբերյալ խնդրանքը քննության առնելու հարցում պատասխանատու մարմինն իր իրավասությունների շրջանակներում իրավունք ունի ստուգելու ներկայացված վկայականները, հայտարարություններն ու իրեն ներկայացված տեղեկատվությունը և պահանջելու ցանկացած այլ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ:

Հոդված 23

Այն դեպքում, երբ կարիքավոր անձը գտնվում է ոչ այն երկրի տարածքում, որտեղ հայցվում է անվճար իրավաբանական օգնության տրամադրումը, իրավաբանական օգնության մասին նրա խնդրանքը՝ կից վկայականի կամ հայտարարության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև լրացուցիչ փաստաթղթերի հետ միասին, կարող է իր քաղաքացիության երկրի հյուպատոսի կողմից փոխանցվել այն մարմնին, որն իրավասու է քննության առնելու վերոհիշյալ դիմումը, կամ այն պետության կողմից նշանակված մարմնին, որտեղ խնդրանքը պետք է քննության առնվի:

Դատական հանձնարարություններին վերաբերող 9-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերի, 10-րդ և 12-րդ հոդվածների դրույթները կիրառվում են նաև անվճար իրավաբա-

նական օգնություն տրամադրելու մասին խնդրանքի և նրան կից փաստաթղթերի հանձնման առնչությամբ:

Հոդված 24

Եթե Պայմանավորվող պետություններից որևէ մեկի քաղաքացուն տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, ապա Պայմանավորվող մյուս պետությունում տվյալ գործով փաստաթղթերի հանձնումը, անկախ դրա իրականացման կարգից, չի առաջացնում հայցվող պետության կատարած ծախսերի փոխհատուցում հայցող պետության կողմից:

Նույն դրույթը վերաբերում է դատական հանձնարարությունների կատարմանը, բացառությամբ փորձագետներին տրվող վճարումների:

5. Ծննդյան, ամուսնության և մահվան վկայականներից քաղվածքների անվճար տրամադրումը

Հոդված 25

Պայմանավորվող մի պետության քաղաքացի հանդիսացող կարիքավոր անձինք Պայմանավորվող մյուս պետության տարածքում կարող են պահանջել ծննդյան, ամուսնության և մահվան վկայականներից քաղվածքների անվճար տրամադրում նույն պայմաններով, ինչ տվյալ պետության քաղաքացիները: Ամուսնության համար անհրաժեշտ փաստաթղթերը անվճար հավաստում են Պայմանավորվող պետությունների դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալները:

6. Ազատազրկումը պարտքի դիմաց

Հոդված 26

Քաղաքացիական կամ առևտրային գործերով՝ պարտքի դիմաց ազատազրկումը, որպես կատարման կամ նախազգուշական միջոց, չի կիրառվում Պայմանավորվող որևէ պետության քաղաքացի հանդիսացող օտարերկրացու նկատմամբ այն դեպքերում, եթե դա չի կիրառվում տվյալ պետության քաղաքացիների նկատմամբ: Տվյալ երկրում բնակություն ունեցող քաղաքացու կողմից որպես պարտքի դիմաց ազատազրկումից իրեն ազատ արձակելու հիմք ներկայացված փաստը կարող է նմանապես վկայել հօգուտ Պայմանավորվող որևէ պետության քաղաքացու, անգամ եթե փաստը տեղի է ունեցել արտասահմանում:

7. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 27

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միջազգային մասնավոր իրավունքի խորհրդաժողովի 7-րդ նստաշրջանում ներկայացված պետությունների համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Յուրաքանչյուր վավերագիր ի պահ հանձնելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որի հավաստված պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկվում է ստորագրած յուրաքանչյուր պետության:

Հոդված 28

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չորրորդ վավերագիրն ի պահ հանձնելուն հաջորդող 60-րդ օրը:

Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետության համար, որն ավելի ուշ է վավերացրել այն, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագիրն ի պահ հանձնելու օրվան հաջորդող 60-րդ օրը:

Հոդված 29

Սույն Կոնվենցիան վավերացրած պետությունների հարաբերություններում այն փոխարինում է 1905թ. հուլիսի 17-ին Հաագայում կնքված Քաղաքացիական դատավարության հարցերով կոնվենցիային:

Հոդված 30

Սույն Կոնվենցիան ինքնաբերաբար կիրառվում է Պայմանավորվող պետությունների մետրոպոլիաների տարածքների նկատմամբ:

Եթե Պայմանավորվող պետությունը ցանկանում է, որ այն կիրառվի բոլոր կամ որոշակի տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, ապա նման մտադրությունն արտահայտվում է փաստաթղթի միջոցով, որն ի պահ է հանձնվում Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը: Վերջինս այդ փաստաթղթի հավաստված իսկական պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկում է Պայմանավորվող պետություններին:

Առարկություն չներկայացրած պետությունների և այն տարածքի կամ տարածքների հարաբերություններում, որոնց միջազգային հարաբերությունների համար տվյալ պետությունը պատասխանատու է և որոնց կապակցությամբ ծանուցում է ներկայացվել, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցմանը հաջորդող 6-րդ ամսվա ընթացքում:

Հոդված 31

Խորհրդաժողովի 7-րդ նստաշրջանում չներկայացված ցանկացած պետության կարող է թույլատրվել միանալու սույն Կոնվենցիային, եթե Կոնվենցիան վավերացրած մեկ կամ մի քանի պետություններ 60 օրվա ընթացքում առարկություններ չեն ներկայացնում դրա դեմ՝ սկսած այն օրվանից, երբ Նիդերլանդների կառավարությունը ծանուցում է այդ միանալու մասին: Կոնվենցիային միանալը կատարվում է 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշված կարգով:

Նկատի է առնվում, որ միանալը կատարվում է Կոնվենցիայի՝ 28-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան ուժի մեջ մտնելուց հետո միայն:

Հոդված 32

Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն, ստորագրելով կամ վավերացնելով սույն Կոնվենցիան կամ հետագայում միանալով դրան, վերապահությամբ կարող է սահմանափակել 17-րդ հոդվածի կիրառումը Պայմանավորվող այն պետությունների քաղաքացիների նկատմամբ, որոնք մշտական բնակության վայր ունեն Պայմանավորվող մյուս պետության տարածքում և նրա դատարաններում հանդես են գալիս որպես հայցվոր կամ երրորդ կողմ:

Հոդված 33

Սույն Կոնվենցիայի գործողության ժամկետը 5 տարի է՝ սկսած 28-րդ հոդվածի առաջին մասում նշված օրվանից:

Այդ ժամկետը գործում է նաև այն պետությունների համար, որոնք ավելի ուշ են միացել Կոնվենցիային կամ վավերացրել այն:

Սույն Կոնվենցիայի գործողության ժամկետը երկարաձգվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ կողմերի լռելյայն համաձայնությամբ, եթե կողմերը չեն որոշում չեղյալ հայտարարել այն: Չեղյալ հայտարարելու մասին ծանուցվում է Կոնվենցիայի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ՝ Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը, որն այդ մասին տեղեկացնում է Պայմանավորվող մյուս պետություններին: Չեղյալ հայտարարումը կարող է տարածվել 30-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն ծանուցման մեջ նշված բոլոր կամ որոշակի տարածքների վրա:

Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում միայն այն պետության համար, որն այդ մասին ծանուցել է: Պայմանավորվող մյուս պետությունների համար Կոնվենցիան շարունակում է ուժի մեջ մնալ:

Ի վկայումն որի՝ իրենց կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Հաագայում, 1954 թվականի մարտի 1-ին, մեկ բնօրինակով, որը պահվում է Նիդերլանդների կառավարության արխիվում: Սույն Կոնվենցիայի հաստատված պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկվում է Հաագայի միջազգային մասնավոր իրավունքի խորհրդաժողովի 7-րդ նստաշրջանում ներկայացված յուրաքանչյուր պետության:

***Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 29-ից:**